ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հայաստանի, այն ժամանակի անվանումով՝ Երևանի նահանգի գյուղացիական ռեֆորմը, ինչպես հայտնի է, կատարվել է 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությամբ Ռուսաստանի 1861 թ. փետրվարի 19-ի և Վրաստանի 1864 թ. (Թիֆլիսի նահանգի), 1865 թ. (Քութայիսի նահանգի) ռեֆորմների օրինակով, Ադրբեջանի հետ միասին (Բաքվի և Գանձակի նահանգներ) նույն օրենքով։

Հայտնի է, որ Հայաստանի համեմատությամբ թե՛ Ռուսաստանը և թե՛ Վրաստանը ցայտուն ճորտատիրական երկրներ էին, ինչ որ չի կարելի ասել Հայաստանի վերաբերմամբ, որտեղ ֆեոդալական հարաբերությունները թեև Նիկոլայևյան Ռուսաստանի ճորտատիրական քաղաքականության հետևանքով XIX դարի 40-ական թթ. Կովկասի առաջին փոխարքա Մ. Ս. Վորոնցովի ժամանակ զգալի չափերով ճորտատիրական գծերով օժտվեցին, բայց ֆեոդալիզմի այդ սաստկացրած աստիճանի շատ գծերից այնուամենայնիվ ազատ մնացին։

Հենց այդ պատճառով էլ ցարական իշխանությունը թեև Ռուսաստանի և Վրաստանի գյուղացիական ռեֆորմների օրենքների հիմունքները տարածեց նաև Հայաստանի (և Ադրբեջանի) վրա, բայց անկարող եղավ բոլորովին անտեսել Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների որոշ առանձնահատկությունները, ինչ որ իր արտահայտությունն է գտել Երևանի նահանգի գյուղացիական ռեֆորմին վերաբերող Կանոնադրությունների մեջ, որոնցից առաջինը՝ 1870 թ. վերաբերում է այսպես կոչված «բարձր դասին» պատկանող կալվածատերերին, իսկ 1877 թ.՝ մնացած բոլորին, այսինքն՝ ոչ-ազնվական համարվող հողատերերին։

Քննենք, ուրեմն, այն հարցը, թե Ռուսաստանի և Վրաստանի Կանոնադրությունների համեմատությամբ ի՞նչ առանձնահատկություններ ուներ Հայաստանին վերաբերող օրենքը՝ ազատագրվող գյուղացիության տնտեսությանը կապիտալիստական ուղղությամբ զարգանալու որոշ հնարավորություններ ընձեռելու իմաստով։ Այդ հարցի պարզաբանման համար հարկավոր է ելակետ ունենալ այն դրույթները, որ նշում է Վ. Ի. Լենինը Ռուսաստանի գյուղացիական ռեֆորմի կապակցությամբ ազատագրված ճորտերի տնտեսության անկաշկանդ զարգացման պայմանների համար։

Ահա այդ դրույթները։

«Գյուղացիական ռեֆորմը,— գրում է նա,— ճորտատերերի ձեռքով իրագործվող բուրժուական ռեֆորմ էր։ Դա քայլ էր Ռուսաստանը բուրժուական միապետության վերածելու ուղիով։ Գյուղացիական ռեֆորմի բովանդակությունը բուրժուական էր. և այդ բովանդակությունը դրսևորվում էր այնքան ավելի ուժեղ, որքան ավելի մի՛ էին կտրվում գյուղացիական հողերը, որքան

ավելի լիովին էին այդպիսիները անջատվում կալվածատիրականից, որքան ավելի պակաս էր ճորտատերերին տրվող տուրքի չափը (այսինքն «ետ գնու�»), որքան ավելի ճորտատերերի ազդեցությունից ու ճնշումից ազատ էին տեղավորվում այս կամ այն վայրի գյուղացիները»[1]։

Ի՞նչ դրության մեջ դրվեցին հողաբաժնի տեսակետից գյուղացիական ռեֆորմի հետևանքով Հայաստանի, Վրաստանի և բուն Ռուսաստանի (Վելիկոռուսիայի) կալվածատիրական գյուղացիները։ Ըստ այդ երկրների Կանոնադրությունների «ազատագրված» գյուղացիների հողերի հատկացումում ամենից քիչ որտե՞ղ կատարվեց և դրա շնորհիվ ռեֆորմի բուրժուական բովանդակությունը որտե՞ղ ավելի ուժգնորեն երևան եկավ։

Վերհիշենք այդ մասին վկայող մի քանի տվյալներ։

1870 թ. Կանոնադրությունը Հայաստանի «բարձր դասին» պատկանող կալվածատերերին իրավունք էր տալիս պահել իրենց կալվածների մեկ երրորդը, եթե գյուղացիական ամեն մի ծխին 15 դեսյատինի փոխարեն ընկներ միայն 7.5 դեսյատին հողաբաժին, իսկ խիստ սակավահող կալվածներում ոչ-պակաս քան 30 դեսյատին հող։ Ոչ բարձր դասին պատկանող կալվածատերերը 1877 թ. սեպտեմբերի 5-ի Կանոնադրության համաձայն իրավունք չունեին իրենց պահել ո՛չ կալվածի հողերի մեկ երրորդը, ո՛չ էլ 30 դեսյատին հող, եթե գյուղացու ծխի բոլոր արական անդամները հնգական դեսյատին հողով չէին ապահովվել։

Անհամեմատ ավելի արտոնյալ դրություն էր ստեղծված Թիֆլիսի և Քութայիսի նահանգների կամ Վրաստանի ազնվականության համար իրենց «ազատագրված» ճորտերին հողաբաժնով ապահովելու գործում։ Ըստ այդ նահանգների Կանոնադրությունների վրաց կալվածատերերն իրավունք էին ստանում պահելու իրենց հողերի կեսը, անկախ այն բանից, թե ինչքան էր ապահովվում գյուղացու հողաբաժնի մինիմումը։ Իսկ բավական մեծաքանակ մանր ազնվականներին իրավունք էր վերապահված իրենց ճորտերին «ազատագրել» ռուսական տնային ճորտերի պայմաններով, այսինքն՝ առանց հողաբաժնի։ Իսկ խիզանների, Վրաստանի այդ հողազուրկ և կալվածատերերի հողի վրա բանավոր համաձայնությամբ ապրող գյուղացիների վերաբերմամբ կալվածատիրական կամայականությունը մնացել էր անձեռնմխելի, այսինքն՝ նրանք կարող էին հողից գրկվել ուզած ժամանակ։

Պակաս արտոնություններ չէին ստացել վելիկոռուսական կալվածատերերն իրենց նախկին ճորտերի հողաբաժինները կրճատելու մեջ «ազատագրումից» հետո. հիշենք նշանավոր «отрезка»-ները, նրանց կալվածի մեկ երրորդը, նույնիսկ կեսն իրենց պահելու իրավունքը, տնային ճորտերին առանց հողաբաժնի ազատագրելը. իրենց գյուղացիներին սահմանված նորմայից պակաս հողաբաժին տալու և հողաբաժին չունեցող գյուղացիներին առանց հողի թողնելու մանր կալվածատերերի արտոնությունը, նաև այլ կամայականություններ գյուղացուն հողաբաժին տալու կամ նրան իր հողաբաժնից այլ տեղ փոխադրելու կալվածատիրական արտոնությունը և այլն։

Ակներև է, որ վրացական և ռուսական կալվածատերերը գյուղացիական ռեֆորմի Կանոնադրություններով իրենց ճորտերի հողաբաժինները կրճատելու անհամեմատ ավելի մեծ արտոնություններ ստացան, քան Հայաստանի ամեն

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, Երևան, 1950, էջ 131—132։

կարգի հողատերերը, մանավանդ ոչ-բարձր դասին պատկանողները։ Այս հանգամանքը թույլ է տալիս նշելու, որ հողաբաժնի հարցում Հայաստանի գյուղացիական ռեֆորմի Կանոնադրության մեջ բուրժուական բովանդակությունն ավելի շոշափելի է երևան գալիս, քան վրացականում, նույնիսկ ռուսականում։

Այդ հանգամանքն ավելի շոշափելի կլինի, եթե նկատի ունենանք, թե Հայաստանում ու Վրաստանում գյուղացիական հողաբաժնի իրական չափը և համապատասխան Կանոնագրություններով սահմանված հողաբաժինների նորման ինչ մեծություն էին կազմում և ինչքան էին տարբերվում իրարից։ Այսպես, Թիֆլիսի նահանգի 1864 թ. Կանոնադրությամբ գյուղացու հողաբաժինը սահմանված էր ամեն մի ծխի համար 5-ից մինչև 10 դեսյատին, իսկ ամեն մի ծխի փաստական հողաբաժինը կազմում էր 3,7 դեսյատին. Քութայիսի նահանգի համար համապատասխան տվյալները հետևյալն են՝ 1865 թ. Կանոնադրությամբ սահմանված նորման 5 դեսյատին, փաստականը՝ 2,5 դեսյատին։

Հայաստանում (Երևանի նահանգում) մեկ ծխի հողաբաժինը սահմանված էր 15 դեսյատին, իսկ փաստականը կազմում էր միջին հաշվով 5.7 դեսյատին։ Տարբերությունն ակներև է և հօգուտ Երևանի նահանգի գյուղացիների. եթե հիշենք, որ վրացական կալվածատերերի պահանջով գյուղացիական հողաբաժինը ենթակա էր նոր մասնարկման (разверстание), իսկ դաստակերտը (усадьба) նույնիսկ տեղափոխման (перенесение), այն ժամանակ լիովին կպարզվի, որ հողաբաժնի հարցում վրացական «աղատագրված» գյուղացիությունն ավելի մեծ կողոպուտի ենթարկվեց և ավելի մեծ չափով կալվածատերն նրա հողաբաժնի և դաստակերտի վրա տնօրինություն անելու իրավունք ստացավ։ Այս նույն ոգով է կազմված Ռուսաստանի (վելիկոռուսական նահանգների) 1861 թ. Կանոնադրությունը, ավելի ճիշտ՝ վրացական Կանոնագրություններն այդ հարցերում կրկնում ու ամրապնդում են ռուսական օրենքն իրենց «աղատագրված» ճորտերի նկատմամբ։

Ուշադրության արժանի է նաև մի ուրիշ հանգամանք։ Վրացական կալվածատերերն իրավունք ունեին իրենց հողերին միացնել գյուղացիական հողաբաժինը՝ եթե գյուղացու ընտանիքը անժառանգ էր մնում, կամ գյուղացին գյուղական դասից դուրս էր գալիս (выход из сельского состояния), կամ թե պարհակները կատարում էր անճշտապահությամբ։

Այդ բոլոր դեպքերում Հայաստանի կալվածատերերի իրավունքներն ավելի սահմանափակ էին. նշված հանգամանքների հետևանքով ազատ մնացած հողերի վրա իրավունք ուներ առաջին հերթին գյուղական հասարակությունը և միայն այն ժամանակ, երբ նա հրաժարվում էր օգտագործել իր իրավունքը, այդպիսի հողաբաժիններն անցնում էին կալվածատիրոջը։

Մի ուրիշ կողմով էլ 1870 թ. մայիսի 14-ի Կանոնագրությունը խախտում էր Ռուսաստանի գյուղացիական ռեֆորմի ճորտատիրական գիծը. գյուղացիական հողաբաժիններն այդ Կանոնագրության համաձայն կանոնագրեր (уставные грамоты) կազմելուց հետո ամրացվում էին գյուղացիներին՝ ամեն մի ծխի մշտական օգտագործման համար, վերացվում էին մինչ այդ գոյություն ունեցող հողի պարբերական վերաբաժանումները (переделы), այսինքն՝ վերացվում էր հողից օգտվելու համայնական կարգը և թույլատրվում էր հողի անցումը մեկից մյուսին, ուրեմն հնարավորություն էր ստեղծվում, որ գյուղա-

ցու տնտեսությունը ներգրավվի բուրժուական հողային հարաբերությունների ոլորտը։

Իսկ 1861 թ. փետրվարի 19-ի Կանոնադրությամբ ցարական իշխանությունն իր ֆիսկալ նկատառումներով և կալվածատերերի իշխանությունն ու հսկողությունը գյուղացիության վրա անխախտ պահելու հաշիվներով պարտադիր դարձրեց գյուղական հողային համայնքի պահպանումը, հետևաբար օրինական կարգով արգելեց հողի անցումը ձեռքից-ձեռք և դժվարացրեց բուրժուական հարաբերությունների ազատ զարգացումը գյուղացիական տնտեսության մեջ։ Ցարիզմի պետական կիսաֆորտատիրական շահերը և կալվածատերերի ռեակցիոն տրամադրություններն այդ դեպքում կերագաս ճանաչվեցին։ Այդ երկու հանգամանքն էլ վճռական դեր չէին կարող խաղալ 1870 թ. ռեֆորմի ժամանակ Հայաստանում (և Ադրբեջանում)։ Այդտեղ գյուղացու հողաբաժնի հետգնումը կատարվելու էր առանց պետության դրական օժանդակության, իսկ տեղական կալվածատերերի իշխանությունը գյուղում ամուր պահելու ձգտումն ամենևին չէր մտնում գաղութատերերի հաշիվների մեջ, առանց այն էլ ցարիզմն նրանց մեծ արտոնություններ էր տվել, գյուղացիական ռեֆորմի հարցում նրանց իրենց իրավունքներով գրեթե հավասարեցնելով ռուս և վրացի ազնվական կալվածատերերին։

Այսպես ուրեմն, Հայաստանի, Վրաստանի և Ռուսաստանի Կանոնադրությունների գյուղացիական հողաբաժնին վերաբերող գրույթների համեմատական շարադրանքը ակներև է դարձնում, որ 1870 թ. օրենքը ավելի քիչ հնարավորություն էր տալիս Երևանի (նաև Բաքվի ու Գանձակի) նահանգի կալվածատերերին ոչ միայն ավելի փոքր չափով կրճատել գյուղացիական հողաբաժինը, այլև այդ հողաբաժնից օգտվելու մեջ էլ գյուղացիների համար ավելի քիչ արգելքներ էր ստեղծում։ Ուստի բավականաչափ հիմք ունենք ասելու, որ այդ ամենում Հայաստանի գյուղացիական ռեֆորմի բուրժուական բովանդակությունն ավելի ցցուն է երևան գալիս, քան Վրաստանի ու նույնիսկ Ռուսաստանի ռեֆորմներում։

Ինչպե՞ս էր դրությունը «ազատագրված» գյուղացիների վրա ծանրացած պարհակների և տուրքերի տեսակետից։ Քանի որ Անդրկովկասի գյուղացիները, ինչպես մեզ արդեն հայտնի է, մինչև 1912 թ. մնացին ժամանակավոր պարտապանի կամ ժամանակավոր կախյալի վիճակում և հետգնումը տեղի էր ունենալու 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով, այդ պատճառով էլ հնարավոր է Հայաստանի գյուղացիների վրա ծանրացած տուրքերի չափի համեմատական քննություն կատարել, նկատի ունենալով Ռուսաստանի «ազատագրված» գյուղացիների ժամանակավոր պարտապանի տարիների տուրքերը։ Ահա այդ մասին եղած տվյալները Վրաստանի, Ռուսաստանի և Հայաստանի նկատմամբ։

Վրաստանի 1864 և 1865 թթ. Կանոնադրությունների համաձայն ժամանակավոր-պարտապան գյուղացիների ամեն մի ծուխ իր հողաբաժնից օգտվելիս կալվածատիրոջ համար պետք է կատարեր հետևյալ նատուրալ պարհակները՝ պտղատու ծառերի այգիներից, խաղողի այգիներից և վարելահողերից բերքի $^1/_4$-ից մինչև $^1/_3$-ը, խոտհարքներից՝ $^1/_3$-ը, իսկ դաստակերտի համար պետք է վճարեր 3-ից մինչև 6 ռուբլի դրամական տուրք։

1861 թ. փետրվարի 19-ի Կանոնադրությունը ժամանակավոր պարտապան գյուղացիների ամեն մի շնչի հողաբաժնի համար սահմանում էր դրամական

տուրք 8-ից մինչև 12 ռուբլու չափով, ապա կոռ՝ դրեթե մինչռեֆորմյան ժամանակների չափերով ու ձևերով, թեև թույլատրվում էր գյուղացիներին կոռի փոխարեն դրամական տուրք վճարելու անցնել, հաղթահարելով կալվածատերերից հարուցվող շատ դժվարություններ։

1870 թ. մայիսի 14-ի Կանոնադրությամբ սահմանված պարհակները Հայաստանի (և Ադրբեջանի) ժամանակավոր-կախյալ գյուղացիների համար համեմատաբար քիչ էին. նատուրալ պարհակների չափը Հայաստանում կազմում էր վարելահողի ամբողջ բերքի 4/30, իսկ Ադրբեջանում 1/10 մասը. կոռի փոխարեն նշանակված էր դրամական տուրք դաստակերտի և վարելահողի ամեն մի դեսյատինի համար 15 կամ 30 կոպեկ։ Հայաստանում գանձվում էր նաև կալվածատերերի օգտին բանջարանոցներից և բոստաններից 80 կոպեկ և այգիներից 1ռ. 20 կ. ամեն մի 360 քառ. սաժեն տարածությունից։

Բացի կալվածատերերին տրվող տուրքերի ղգալի թեթևությունից, Հայաստանի կալվածատիրական գյուղացիությունը վրացական և ռուսական գյուղացիության համեմատությամբ դրեթե ազատ էր տուրքերի վճարման համար այնտեղ սահմանված համապարտ երաշխավորությունից, որի շնորհիվ վրացական և ռուսական գյուղացիության վրա ծանրացած էր մնում ճորտատիրական բնույթ կրող այդ ծանր լուծը։ 1870 թ. Կանոնադրությամբ համապարտ երաշխավորությունը նախկին կալվածատիրական գյուղում շատ նեղ շրջանակներում էր պահպանված և վերաբերում էր միայն այն հողաբաժիններից գանձվող տուրքերին, որոնք զանազան պատճառներով ժամանակավորապես գտնվում էին գյուղական հասարակության տրամադրության տակ։ Ավելացնենք նաև, որ 1870 թ. Կանոնադրությամբ վերացված էին կոռը, կամ այսպես կոչված «պարտադիր աշխատանքի օրերը», որոնց փոխարեն, ինչպես նշվեց վերևում, սահմանված էր դրամական տուրք։

Կալվածատիրական տուրքերի գանձման մյուս հարցերում 1870 թ. Կանոնադրության մեջ կամ կրկնված էին վրացական և ռուսական օրենքների բոլոր կիսաճորտատիրական միջոցառումները, կամ փաստապես ուժի մեջ էին թողնված պարհակների կատարման մինչռեֆորմյան ձևերը, որ անփոփոխ մնացին մինչև 1912 թ., ինչպես, օրինակ, նատուրալ պարհակներից դրամականին անցնելը և այլն։

Այսպես ուրեմն, կարելի է ակներև համարել այն իրողությունը, որ Հայաստանի (և Ադրբեջանի) «ազատագրված» կալվածատիրական գյուղացիությունը հողաբաժնի և նատուրալ ու դրամական տուրքերի չափերի հարցում համեմատաբար տանելի պայմաններում դրվեց 1870 թ. Կանոնադրությամբ, քան հարևան վրացական գյուղացիական մասսան և մետրոպոլիտյի վելիկոռուսական նահանգների գյուղացիությունը։ Այդ հանգամանքն ավելի նպաստավոր պայմաններ կարող էր ստեղծել Հայաստանի գյուղացիության՝ բուրժուական տնտեսական զարգացման ուղիով ընթանալու համար, քան, օրինակ, այդ հնարավոր էր նշված երկու կետում էլ կալվածատերերից ավելի մեծ կախման մեջ ընկած վրացական գյուղացիության համար, նույնիսկ ռուսական գյուղացիության համար, եթե ուրիշ կարգի հանգամանքներ չգային չեզոքացնելու այդ նպաստավոր պայմանների ներգործությունը։

Այդ կարգի հանգամանքներից առաջին հերթին կանգ առնենք գյուղացիական հողաբաժնի հետգնման հարցի լուծման այն կարգի վրա, որ սահմանված

էր 1870 թ. մայիսի 14-ի Կանոնադրությամբ։ Գյուղացիներին իրավունք էր վերապահված նաև առանց կալվածատիրոջ համաձայնության իրենց հողաբաժինների հետգնում պահանջել, ինչ որ չկար, օրինակ, ռուսական (վելիկոռուսական) Կանոնադրության մեջ, որի համաձայն հետդնումը կարող էր տեղի ունենալ միայն կալվածատիրոջ համաձայնությամբ։ Հենց դրա շնորհիվ էլ ռուսական աղնվականության մի զգալի մասը գյուղացիական հողաբաժնի հետգնումը երկու տարվա փոխարեն երկարաձգեց ամբողջ քսան տարի, մինչև 1880-ական թթ. սկիզբը, երբ կառավարությունն ստիպված եղավ պարտադիր դարձնել հետդնումը և ժամանակավոր պարտապանի դրության մեջ մնացած ամբողջ գյուղացիության մոտ 20 տոկոսը միայն 1883 թ. սկզբին վերջացրեց իր հողաբաժնի հետդնումը և նրա սեփականատերը դարձավ։

Բայց Հայաստանի (և Ադրբեջանի) կալվածատիրական գյուղացիությանը տրված այդ արտոնությունը լիովին անարդյունք մնաց, քանի որ 1870 թ. Կանոնադրությունը գյուղացու հողաբաժնի հետգնման համար չէր նախատեսում պետական դրամական օժանդակություն, թողնելով այդ գյուղացու և կալվածատիրոջ փոխադարձ համաձայնության, նաև պարտադիր ժամկետ չնշանակելով հողաբաժնի հետգնումը ավարտելու համար։ Այդ պատճառով թեև կանոնագրերի կազմելը հիմնականում երկու տարվա ընթացքում ավարտվեց, բայց հողաբաժնի հետգնման գործարքն իբրև կանոն տեղի չունեցավ ամբողջ քառասուն տարի ոչ միայն Հայաստանում (և Ադրբեջանում), այլև մասամբ Վրաստանում, թեև վերջինում հետգնման պայմանները մի փոքր այլ էին։ Այնտեղ վարելահողերի հետգնման համար նախատեսվում էր պետական դրամական աջակցություն, բայց ինչպես այդ հողերի, այնպես էլ դաստակերտների հետգնման համար անհրաժեշտ էր համարվում կալվածատիրոջ համաձայնությունը, իսկ պտղատու ծառերի այգիների և խաղողի այգիների հետգնման համար գյուղացիներին պետական դրամական աջակցություն չէր տրվում։ Եվ քանի որ Վրաստանում, ինչպես նշվեց վերևում, գյուղացիների նատուրալ պարհակները շատ մեծ էին, կալվածատերերը շահագրգռված էին պահպանել ժամանակավոր պարտապանի դրությունը և հետգնումը կազմակերպելու համաձայնություն չէին տալիս։

Իսկ Հայաստանի (և Ադրբեջանի) համար ցարական չինովնիկների հաշիվներով գյուղացու հողաբաժնի հետգնման այնպիսի գումարներ էին ստացվում, որ ոչ միայն վեր էին գյուղացիների նյութական հնարավորություններից, այլև շփոթություն էին առաջ բերում անգամ Անդրկովկասի կառավարական շրջաններում, որոնք չէին գտնում այլ ավելի լավ միջոց, քան հետաձգել հարցի լուծումը, իբր թե հողաբաժնի գնահատման և հետգնման գումարների որոշման այլ եղանակներ մշակելու համար, և ցարական իշխանության անշտապ տեմպերով գործը քաշքշվեց մինչև... 1912 թ.։

Այսպիսով, ամբողջ Անդրկովկասում գյուղացու հողաբաժնի հետգնման հարցը փաստապես լուծում չստացավ և գյուղացիական ռեֆորմի հիմնական հարցերից մեկը չկարգավորվեց նույնիսկ ցարական կիսաճորտատիրական ռեֆորմի շրջանակներում. «Ազատագրված» գյուղացիությունը մնաց ժամանակավոր պարտապանի (Վրաստան) կամ ժամանակավոր կախյալի (Հայաստան և Ադրբեջան) դրության մեջ՝ իր հողաբաժնի սեփականատերը չդառնալով թեկուզ ծանր փրկավճարով։ Ուրեմն, ինչպես Լենինն է ասում, գյուղացու հո-

ղերի զատում չկատարվեց և ճորտատերերի ազդեցությունից ու ճնշումից ազատ չկարդավորվեց նրա տնտեսությունը։ Այդ կողմից Անդրկովկասի գյուղացիական ռեֆորմի բուրժուական էության դրսևորումը չէր կարող չարգելակվել կալվածատերերի կիսաճորտատիրական իրավունքների պահպանումով՝ գյուղացիության վրա։

Չի կարելի հաշվի չառնել, սակայն, այն հանգամանքը, որ Հայաստանի կալվածատիրական գյուղացիության վրա համեմատաբար թույլ էր ճորտատիրական լուծը, այդ պատճառով, օրինակ, վրացական «ազատագրված» գյուղացիության համար ժամանակավոր պարտապանի դրությունը շատ ավելի կաշկանդիչ բեռ էր, քան Հայաստանի, գուցե և Ադրբեջանի, գյուղական մասսայի համար։

Այսպես օրինակ, Ռուսաստանի նման Վրաստանի ժամանակավոր պարտապան գյուղացիների վրա փաստորեն մասամբ պահպանվեց կալվածատիրոջ վոտչինային իրավունքը, իսկ Հայաստանի գյուղացիներն ազատվեցին կալվածատերերի ոստիկանական խնամակալությունից, որ, ի դեպ ասած, հենց ցարիզմն էր մտցրել հայկական գյուղում 1840-ական թթ. իր ճորտատիրական քաղաքականության տարիներին փոխարքա Մ. Ս. Վորոնցովի ջանքերով։

Նշենք նաև, որ 1861 թ., այսինքն Հայաստանի (և Ադրբեջանի) գյուղացիական ռեֆորմից առաջ, մտցված գյուղական ինքնավարությունը ևս անմիջականորեն ենթակա չէր կալվածատերերին, այլ փաստապես հանդիսանալով պետական ոստիկանական իշխանության գործիքը, ավելի շատ ծառայում էր ցարական գաղութարարների վարչական նպատակներին, քան նրանց տեղական գործակալների շահագործական նկրտումներին.

Մենք փորձեցինք համեմատական քննության առնել և զուգադրել 1870 թ. մայիսի 14-ի կամ Հայաստանի (և Ադրբեջանի) գյուղացիական ռեֆորմի Կանոնադրության մի քանի էական կետերը Ռուսաստանի վելիկոռուսական նահանգների 1861 թ. և Վրաստանի 1864 և 1865 թթ. Կանոնադրությունների համապատասխան կետերին, ելակետ ունենալով Վ. Ի. Լենինի ցուցումները։

Ակներև պետք է համարել, որ Հայաստանի (և Ադրբեջանի) կալվածատիրական գյուղացիությունը հողաբաժնի հարցում ընդհանուր առմամբ ավելի քիչ կողոպուտի ենթարկվեց և ավելի մեծ հողաբաժին ստացավ, քան հատկապես վրացական նախկին ճորտ մասսան կամ, Վ. Ի. Լենինի բառերով ասած, ընդհանուր առմամբ համեմատաբար «ավելի քիչ կրճատվեցին գյուղացիական հողերը», թեև լրիվ չանջատվեցին կալվածատիրականից։

Հայաստանի կալվածատիրական գյուղացու վրա ծանրացած նատուրալ և դրամական տուրքերն էլ համեմատաբար ավելի փոքր էին, քան Վրաստանում և նույնիսկ Ռուսաստանում։

Հայաստանում (և Ադրբեջանում) «ազատագրված» գյուղացիության վրա գրեթե վերացավ կալվածատերերի իշխանության անմիջական լուծը, իսկ Վրաստանում և Ռուսաստանում այս կամ այն ձևով պահպանվեց կալվածատերերի ոստիկանական հսկողության իրավունքն իրենց նախկին ճորտերի վրա և այլն։

Բայց Հայաստանի (և Ադրբեջանի), նաև մասամբ Վրաստանի գյուղացիությունը Ռուսաստանի համեմատությամբ հողաբաժնի հետգնման հարցում լայնթարագույն պայմաններում դրվեց, ցարական ռեֆորմն այստեղ չավարտվեց և ժամանակավոր պարտապանի դրությունն Վրաստանում, իսկ ժամանա-

կավոր-կախյալի դրությունը Հայաստանում (և Ադրբեջանում) մնաց իր ուժի մեջ ռեֆորմից հետո գրեթե ամբողջ կես դար։

Հայաստանի գյուղացիական ռեֆորմին նվիրված մեր մենագրության մեջ այս հարցերի կապակցությամբ մենք հետևյալ եզրակացությանն էինք հանգել. «Բայց որովհետև Հայաստանում (և Ադրբեջանում) այնուամենայնիվ գյուղացիների կախումն իրենց կալվածատերերից անհամեմատ ավելի թույլ դարձավ, քան Վրաստանում և Ռուսաստանում, այդ պատճառով նույնիսկ հետգնման չիրականացումը չի խանգարում խոսել այն մասին, որ Հայաստանի գյուղացիական ռեֆորմն ավելի բուրժուական բնույթ ուներ ոչ միայն վրացականի, այլև անգամ ռուսականի համեմատությամբ»[2]։

Այդ եզրակացությունը, հատկապես Ռուսաստանի վերաբերմամբ, վերանայման կարիք ունի։ Դրա մասին մեր սովետահայ պատմագիտական գրականության մեջ կան արդարացի քննադատական դիտողություններ, որոնց անդրադարձել ենք մի այլ կապակցությամբ և ճշտել այդ եզրակացության ձևակերպումը։

Այժմ միայն նշենք, որ թեև Հայաստանի (նաև Ադրբեջանի) գյուղացիական ռեֆորմն ամբողջովին կենսագործվեց ցարիզմի միջոցով ու նրա անդրկովկասյան չինովնիկների մշակած ծրագրով, բայց անգամ նրանք անկարող էին անտեսել այն առանձնահատկությունները, որ բնորոշ էր Հայաստանի գյուղի համար։ Չէ՞ որ նրա գյուղում ռեֆորմի շրջանում գոյություն չունեին ճորտատիրական ձևակերպված հարաբերություններ, իսկ դրանց առկա մի շարք գծերը հիմնականում ցարիզմի XIX դարի կեսերի ճորտատիրական քաղաքականության արդյունք էին։ Ցարիզմն ստիպված էր Հայաստանի կալվածատիրական գյուղացիության այդ հատուկ դրությունն ընդգծելու համար նրանց անվանել կալվածատերերի հողի վրա ապրող «պետական շինականներ», իսկ նրանց տերերին չհավասարեցնել իրենց դասային իրավունքներով ռուս և վրացի ազնվականներին։ Այդ պատճառով էլ Հայաստանի (նաև Ադրբեջանի) գյուղացիական ռեֆորմի Կանոնադրությունների մեջ թեև շատ բան կազմված է Ռուսաստանի և Վրաստանի ճորտատիրական Կանոնադրությունների ոգով, բայց նկատելի են նաև որոշ գծեր, որոնք բուրժուական զարգացման համար որոշակիորեն ավելի նպաստավոր պայմաններ կարող էին ստեղծել Հայաստանի գյուղում։

Բայց ցարիզմն իր ճորտատիրական էությանը հավատարիմ մնաց և այդ դեպքում. մի ձեռքով գրածը ջնջեց մյուս ձեռքով։ Հայաստանի (և Ադրբեջանի) «ազատագրված» գյուղացին զրկվեց օրենքով իրեն տրված հողաբաժինը, թեկուզ փրկավճարով, գնելու հնարավորությունից։ Ռեֆորմից հետո գրեթե կես դար, մինչև 1912 թ., նա մնաց ժամանակավոր-կախյալ գյուղացու դրության մեջ, որովհետև ցարիզմը, ի տարբերություն Ռուսաստանի, Հայաստանի գյուղացուն իր հողաբաժինը կալվածատիրոջից գնելու համար նյութական օժանդակություն չտվեց, ուրիշ խոսքով՝ գյուղացին անկարող եղավ գնել իր հողաբաժինը և ստիպված եղավ իր տերերի համար կատարել գրեթե այն բոլոր ֆեոդալական պարհակները, ինչ որ մինչև ռեֆորմը։

[2] В. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947, էջ 265։

Ահա Հայաստանի գյուղացիական ռեֆորմի գլխավոր առանձնահատկությունը մասնավորապես Ռուսաստանի ռեֆորմի համեմատությամբ։ Այդ չէր կարող իր որոշ կարևորագույն նշանակությունը չունենալ Հայաստանի գյուղի կապիտալիստական զարգացման համար մյուս հանգամանքների շարքում, մասնավորապես ցարիզմի գաղութային քաղաքականության ակներև իրողության պայմաններում, նաև այն պարագայի շնորհիվ, որ գյուղացիական ռեֆորմը Հայաստանում վերաբերում էր գյուղացիության համեմատաբար փոքր մասին, ոչ ավելի քան 16—18 տոկոսին։

ОСОБЕННОСТИ КРЕСТЬЯНСКОЙ РЕФОРМЫ В АРМЕНИИ

Член-корр. АН Арм. ССР В. А. РШТУНИ

(Резюме)

Крестьянская реформа в Армении в 1870 г. хотя в общем была проведена на основании принципов полукрепостнических «Положений» в России и Грузии, но в ней имеются некоторые особенности. Так, меньше были отрезаны наделы крестьян, сравнительно малы были натуральные и денежные сборы с них, свободнее от влияния помещиков устраивались крестьянские общества и их самоуправления. По «Положению» 1870 г. было упразднено общинное землепользование и введено подворное владение, что, конечно, не могло не способствовать более быстрому развитию капиталистических отношений в армянской деревне.

Но вместе с тем «Положением» 1870 г. не было предусмотрено государственного содействия за выкуп крестьянского надела, хотя крестьянам было предоставлено право требовать выкуп без согласия помещика. Именно из-за этого как в Армении, так и во всем Закавказье выкуп не был осуществлен до 1912 г., и крестьяне оставались в положении временно-обязанных или временно-зависимых.